



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԳՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՔՐԵՍԵՆԹԱ  
ՀՈՎԻՏԻ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, յառաջիկայ Կիրակի տօնն է Վերացման Ս. Խաչին: Տաղաւար տօները կանխող շաբաթը, մեր տօնացոյցին համաձայն, Բարեկենդանի պահոց օրեր են: Արդ՝ Կիրակի, Սեպտեմբեր 7-ը Բարեկենդան Ս. Խաչի Պահոց օրն է:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան այս առիթով պիտի հանդիսապետէ Քրեսենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող հոգեւոր իր պատգամը: Արարողութիւնը կը սկսի կ.ե. ժամը 1:00-ին:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT THE  
CRESCENTA VALLEY PARISH**

On Sunday, September 14<sup>th</sup>, the Feast of the Exaltation of the Holy Cross will be celebrated by the Armenian Apostolic Church. As with all major feasts, a weeklong fast precedes the Feast of the Exaltation of the Holy Cross, the eve of which is on Sunday, September 7<sup>th</sup>.

On this occasion H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at the Armenian Apostolic Church of Crescenta Valley. The service will begin at 1:00 p.m.

**ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱՐԿԸ 1,025,000 ՏՈԼԱՐԻ ԱՆՆԱԽԸՆԹԱՅ  
ՅԱՏԿԱՑՈՒՄ ՄԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԹԵՄԻՍ ԱԶԳԱՅԻՆ  
ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգային Վարչութիւնն ու Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինը այսու սրտի անհուն գոհունակութեամբ ու երախտագիտական զգացումներով կը յայտարարեն, թէ Լինսի Հիմնարկը Թեմիս Ազգային

Վարժարաններուն կատարեց 1,025,000 տոլարի աննախընթաց յատկացում մը՝ ուսումնական 2008-2009 տարեշրջանին համար:

Յատկացումները ստացած մեր վարժարաններն են.-

- Ռոզ եւ Ալեք Փիլիպոս Ազգ. Երկրդ.վարժարան
- Ս. Նահատակաց Ֆերահեան Ազգ. Երկրդ.վարժարան
- Մեսրոպեան Ազգ. Երկրդ. վարժարան
- Վահան եւ Անուշ Շամլեան Ազգ. Վարժարան
- Արի կիրակոս Մինասեան Ազգ. վարժարան
- Գռուզեան-Չաքարեան-Վասպուրական Ազգ. վարժարան
- Ռիչըրտ Թիւֆէնկեան Ազգ. Մանկապարտեզ
- Լեւոն եւ Յասմիկ Թաւլեան Ազգ. Մանկապարտեզ

Ազգ. Վարժարաններուն իր կատարած տարեկան յատկացումներուն կողքին, Լինսի Զիմնարկը յաւելեալ նուիրատուութիւնը կը կատարէ՝ հիմնուելով իւրաքանչիւր վարժարանի կարիքներուն ու պայմաններուն վրայ: Այս յատկացումը մեծ նպաստ պիտի բերէ մեր դեռատի ու պատանի հայ աշակերտներուն որակաւոր ուսում ջամբելու առաքելութեան:

«Մեծապէս շնորհակալ ենք այս բացառիկ յատկացումին համար, եւ կ'ուզենք մեր երախտագիտութիւնը յայտնել Լինսի Զիմնարկին, մեր աշխատանքներուն ու առաքելութեան անոնց հետեւողական զօրակցութեան ու քաջալերանքին համար», յայտարարեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:



Այս առիթով, Արեւմտեան Թեմի Ազգ. Առաջնորդարանն ու անոր հովանիին տակ գործող մարմինները սրտագին շնորհակալութիւն կը յայտնեն Լինսի

Զիմնարկին, իրենց առատաձեռն նուիրաբերումին ու թանկագին աջակցութեան համար, ի խնդիր մեր գաղութի ու ընդհանրապէս սփիւռքահայութեան յառաջդիմութեան ու բարգաւաճման:

## **THE LINCY FOUNDATION MAKES AN UNPRECEDENTED CONTRIBUTION OF \$1,025,000 TO PRELACY SCHOOLS**

It is with great gratitude that H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the Executive Council, and the Board of Regents of Prelacy Schools announce that The Lincy Foundation has made an unprecedented contribution in the amount of \$1,025,000 to Prelacy Schools for the 2008-2009 academic year.

The contributions were made to the following schools:

Rose & Alex Pilibos Armenian School  
 Holy Martyrs Ferrahian Armenian School  
 Mesrobian Armenian School  
 Vahan & Anoush Chamlian Armenian School  
 Ari Guiragos Minassian Armenian School  
 Krouzian-Zekarian-Vasbouragan Armenian School  
 Richard Tufenkian Armenian Pre-School  
 Levon & Hasmig Tavlian Armenian Pre-School

Alongside their annual donations to Prelacy Schools, The Lincy Foundation has this year allocated an additional sum based on the individual needs and circumstances of each of our schools. These disbursements will enable our schools to continue to provide the highest standard of education to generations of Armenian youth. "We are grateful for this extraordinary contribution and wish to express our genuine appreciation to The Lincy Foundation for their encouragement and enduring support of our endeavors and mission", stated Archbishop Mardirossian.



The Western Prelacy and affiliated bodies once again convey their heartfelt thanks to The Lincy Foundation for their generous endowments and invaluable contribution to the progress and prosperity of our communities in Armenia and the Diaspora.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻ ՕՐՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԻԹՈՎ**

Թեմիս Ազգային Վարժարաններուն համար, Չորեքշաբթի, 3 Սեպտեմբերը վերամուտի օրն էր: Ամառնային արձակուրդի շրջանը բոլորելէ ետք, մեր դեռատի ու պատանի աշակերտները վերադարձան դպրոց՝ հոգիներու եւ միտքերու հարստացման օճախները:



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Վերամուտի առաւօտուն այցելեց յաջորդաբար Ազգ. Ալեք Փիլիպոս Երկրդ. Վարժարանն ու Վահան եւ Անոյշ Շամլեան վարժարանը, ապա նաեւ հաղորդակցութեան մէջ մտաւ բոլոր վարժարաններու տնօրէններուն ու վարիչներուն հետ, բարի երթ մաղթելով 2008-2009 ուսումնական տարեշրջանին համար:

Ազգ. Ալեք Փիլիպոս վարժարանին մէջ, Առաջնորդ Սրբազանը դիմաւորուեցաւ տնօրէնին, ուսուցչական կազմին ու աշակերտներուն կողմէ: Վերամուտի իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը վեր առաւ

Հայ Դպրոցին իւրայատուկ դերն ու առաքելութիւնը մեր մատղաշ սերունդներուն հոգեւոր ու ազգային դաստիարակութեան գործին մէջ, ընդգծելով որ մեր վարժարանները, գիտութիւն եւ տեղեկութիւն ջամբելու կողքին, մեր աշակերտներուն կ'ընծայեն հոգեկան ու ազգային հարստութեամբ տոգորուելու առիթը: Ան մաղթեց, որ մեր աշակերտները Աստուծոյ պատկերը անաղարտ պահեն ու աճին մարմնով, միտքով ու հոգիով:

Առաջնորդ Սրբազանը նաեւ յիշեալ երկու վարժարաններու տնօրէնութեանց յանձնեց Լիսսի Հիմնարկին կողմէ ուսումնական նոր տարեշրջանին համար կատարուած յատկացումը, իսկ միւս վարժարաններուն յատկացումները յանձնուեցան Ազգ. Վարչութեան ատենապետին եւ հոգեւոր հովիւներու կողմէ: Նշենք, որ բոլոր վարժարաններուն կատարուած յատկացումին ընդհանուր գումարը այս տարի բացառաբար 1,025,000 տոլար է, հիմնուելով դպրոցներու կարիքներուն ու ծրագիրներուն վրայ:

Վերամուտի առիթով, յատուկ արարողութիւններ տեղի ունեցան նաեւ Ազգային բոլոր վարժարաններու եւ մանկամստւորներու յարկին տակ: Իւրաքանչիւր շրջանի հոգեւոր հայրերը ներկայ եղան արարողութեան, կատարեցին ուսումնական տարեշրջանի առաջին աղօթքը ու ընթերցեցին Առաջնորդ Սրբազանին վերամուտի յատուկ պատգամը:

## **PRELATE CONVEYS HIS BLESSINGS ON THE START OF THE NEW SCHOOL YEAR**

On Wednesday, September 3<sup>rd</sup>, Prelacy Schools commenced the 2008-2009 academic year. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited Prelacy Schools and offered his blessings to the faculty and students for a successful school year. The Prelate visited Rose and Alex Pilibos School and Vahan and Anoush Chamlian School on Wednesday, and was in telephone contact with the principals of the schools he could not visit personally.

Upon his arrival at Pilibos School, the Prelate was greeted by the principal, faculty, and students. In his message addressed to the students, the Prelate emphasized the special role of the Armenian School in that alongside the academic curriculum, our schools have an additional mission to instill in our students our spiritual and national values.

During his visits to the schools, the Prelate also presented the principals with the recent donation made by The Lincy Foundation to Prelacy Schools, which this year was in the unprecedented amount of \$1,025,000. The rest of the checks were presented to each of the schools by the chairman of the Executive Council and pastors.

Prelacy pastors also attended the ceremonies of their local schools to convey their blessings and to read the Prelate's back to school message to the students.